## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ.Խաչաղբյուր

23.01.2018թ.
N_6_

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Կ. ԲՈԹՈՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր համայնքապետարանի 15.01.2018թ-ի ավագանու անդրանիկ նիստի թիվ 1,2,3,4,5 որոշումները:

Առդիր 11 էջ:

Համայնքի ղեկավար Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ ԱՎԱԳԱՆԻ

«__15__» _____01_____2018թ.

հասցե 1փց. N 30
հեռ.094-94-87-40

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԽԱՉԱՂԲՅՈՒՐ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 1-ԻՆ ՆԻՍՏԻ N 1,2,3,4,5 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԽԱՉԱՂԲՅՈՒՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Խաչաղբյուր Հեռ. 094948740

15.01.2018թ. ՆԻՍՏ N 1

Տեղի ունեցավ Խաչաղբյուրի համայնքապետարքնի ավագանու անդրանիկ նիստը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար պարոն՝ Սերգո Գալստյանը:

Նիստին մասնակցում էին ավագանու 5 անդամները:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Նիստի օրակարգը բաղկացած էր հինգ հարցից:

1.2018թ-ի տեղական տուրքերը , վճարները և դրույքաչափերը սահմանելու և հաստատելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

2.Յամայնքի ղեկավարի աշխատավարձի սահմանման և հաստատման մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

3.Յամայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին : Զեկուցող՝ Ս. Գալստյան:

4.Խաչաղբյուր համայնքի 2018 թ-ի տարեկան բյուջեի քննարկման և հաստատման մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

5.Յամայնքապետարանի գրասենյակային գույքի՝ էլ. սարքավորումների (համակարգիչ,տպիչ) ձեռք բերելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

ԿՈՂՄ ԴԵՄ Ձեռնպահ:

1. Վ. Խաչատրյան
2. Տ. Գաբոյան
3. Ա. Գաբոյան
4. Գ. Խաչատրյան
5. Պ. Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 1

Լսեցին -1 Խաչաղբյուր համայնքի 2018թ-ի տեղական տուրքերը , վճարները և դրույքաչափերը սահմանելու և հաստատելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան

Զեկուցողը Ներկայացնելով տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու ծևաչափերը համապատասխան օրենքի սահմաններում, որի նախագիծը հաստատվել է ավագանու 11 դեկտեմբերի 2017թ-ի թիվ 21 որոշմամբ առաջարկեց քննարկել և հաստատել այն: Քննարկելով համայնքի ղեկավարի առաջարկը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներով և հիմք ընդունելով համյնաքի ավագանու 11 դեկտեմբեր 2017 թ-ի 8-րդ նիստի թիվ 21 որոշմամբ ընդունված 2018թ-ի տեղական տուրքեր և վճարների դրույքաչափերը սահմանելու և հաստատելու մասին

Որոշեց՝

Տալ համաձայնություն Խաչաղբյուր համայնքի տարածքում 2018 թ-ի հունվարի 1-ից տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու ստորև ներկայացված ծևաչափով:
Համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների, շենքերի, շինությունների (ներառյալ ժամանակավոր), շինարարություն (շինարարական մոնտաժային աշխատանքներ) սկսելու թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է՝
ա) Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար մինչև 0-15.000 դրամ, սահմանել 5000 դրամ:
բ) Սույն կետի աե ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
բա/ 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 30000 դրամ սահմանել 10.000ՀՀ դրամ:
բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 50000 դրամ սահմանել 15.000ՀՀ դրամ:
բգ/ 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 50000 դրամ սահմանել 25.000ՀՀ դրամ. ըչ հիմնական շինությունների համար:
գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 8000 դրամ դրամ:
դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000 դրամ:
Համայնքի տարաճքում գտնվող օբյեկտները վերակառուցելու, ամրացնելու արդիականացնելու, վերականգնելու օբյեկտների արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ կատարելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է 0-15000 ՀՀ դրամ, սահմանել 300 ՀՀ դրամ:
1/ Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինարարությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 0-ից 17.500 ՀՀ դրամ, սահմանել 1.000 ՀՀ դրամ:

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլատվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 1.500-ից 17.500դրամ, սահմանել 1.500դրամ:

Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլատվության համար տեղական տուրք սահմանվում է՝

ա/ Գյուղատնտեսական մթերքների համար յուրաքանչյուր օրվա համար 3.000դրամ:

բ/ Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մեծածախս առևտրի կետերում վաճառքի թույլատվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 20.000դրամ:

Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները (սաունարաններ), զվարճանքի օբեկտներ ժամ 24:00-ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ Առևտրի օբեկտների համար 25.000դրամից 50.000դրամ, սահմանել 25.000դրամ:

բ/ Հանրային սննդի և զվարճանքի օբեկտների համար 50.000-ից 100.000դրամ, սահմանել՝ 50.000դրամ:

գ/ Բաղնիքների համար 200.000-ից 500.000դրամ, սահմանել՝ 200.000դրամ:

դ/ Խաղատների համար 500.000-1000000դրամ, սահմանել՝ 500.000 դրամ:

Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրք ընթացիկ տարվա համար 0-1000 դրամ, սահմանվում է 1000 դրամ:

ե) Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների համար փոխհատուցման վճար սահմանել 1000դրամ:

զ/ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 1000դրամ:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| Կողմ | Դեմ | Ձեռնպահ: |
|---|---|---|
| | | |

Վ.Խաչատրյան

Տ.Գաբոյան

Ա.Գաբոյան

Գ.Խաչատրյան

Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ N 2

Լսեցին- Համայնքի ղեկավարի աշխատավարձի սահմանման մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարի աշխատավարձը 2018 թ-ի հունվարից սահմանել 300000 (երեք հարյուր հազար)ՀՀ դրամ:

Հարցը քննարկելուց հետո ավագանին

Որոշեց՝

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի աշխատավարձը 2018 թ-ի հունվարից սահմանել 300000 (երեք հարյուր հազար)ՀՀ դրամ:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|

1. Վ. Խաչատրյան
2. Տ. Գաբոյան
3. Ա. Գաբոյան
4. Գ. Խաչատրյան
5. Պ. Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N3

Լսեցին Խաչաղբյուր համայնքի ղեկավարի 2018թ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, 32-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով, «Համայնքային ծառայության» ՀՀ օրենքի 42,43 հոդվածներով և ՀՀ տարածքային նախարարի 2006թ-ի նոյեմբերի 21-ի համայնքի ղեկավարի աշխատակազմի պաշտոնների անվանացանկերը հաստատելու մասին թիվ 205Ա պահանջով Խաչաղբյուր համայնքի ավագանին

Որոշեց՝

Համաձայնություն տալ ՀՀ Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ստորև ներկայացված նախագծին:

1. Աշխատակազմի թվաքանակը՝11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝
3. Միաժամանակ վճարել 20% բարձր լեռնային բայց ոչ ավել 1 դրույքի համար 8000 հազար դրամից

| ՀՀ | Հաստիքի անվանումը | Անուն, ազգանուն | Ծննդյան տարեթիվը | Հաստիքայ ին միավոր | Պաշտոնային Դրույքաչափը | Ընդհանուր | Աժ % | Հ/Ղ % |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | Սերգո Գալստյան | 1959 | 1 | 300000 | 300000 | 50 | - |
| 2 | Աշխատակազմի քարտուղար | Նվեր Զաքարյան | 1968 | 1 | 175000 | 175000 | - | 55 |
| 3 | Գլխավոր մասնագետ2-3-1 | Պետրոս Պետրոսյան | 1973 | 1 | 172000 | 172000 | - | 52 |
| 4 | Առաջատար մասնագետ3-1-1 | Վախթանգ Մարտիրոսյան | 1982 | 1 | 102000 | 102000 | - | 33 |
| 5 | Առաջատար մասնագետ3-1-2 | Մարինե Ասատրյան | 1986 | 1 | 102000 | 102000 | - | 35 |
| 6 | Կրտ. պաշտ. 1-ին կարգի մասնագետ 3—2-1 | Տոնիկ Խաչատրյան | 1985 | 1 | 93000 | 93000 | - | 29 |
| 7 | Մշակույթի տան տնօրեն | Սոս Գաբոյան | 1946 | 1 | 95000 | 95000 | - | 29 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | Նախակրթարանի դաստիարակ | Գայանե Ալոյան | 1994 | 1 | 77500 | 77500 | - | 26 |
| 9 | Հավաքարար պահակ | Հասմիկ Մխիթարյան | 1958 | 1 | 72550 | 72550 | - | 25 |
| 10 | Կոմունալ ծառայության աշխատակից | Հարբիկ Ղազարյան | 1992 | 1 | 77500 | 77500 | - | 26 |
| 11 | Համակարգչային օպերատոր | | | 1 | 72550 | 72550 | - | 26 |
| | Գրադարանավար | Գալստյան Մարիա | 1992 | 1 | 77500 | 77500 | - | 26 |

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

Կողմ Դեմ Ձեռնպահ:

Վ.Խաչատրյան

Տ.Գաբոյան

Ա.Գաբոյան

Գ.Խաչատրյան

Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ N 4

Լսեցին -4.Խաչաղբյուր համայնքի 2018 թ-ի տարեկան բյուջեի քննարկման և հաստատման մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Բյուջեն եկամտային և ծախսային մասով հետևյալ տեսք ունի:

| ՀՀ | Եկամուտների անվանումը | Ըստ եռամսյակների աճողական | | | |
|---|---|---|---|---|---|
| | | տարեկան | եռամսյակ | կիսամյակ | 9 ամիս |
| I | Հարկային եկամուտներ | 6737,7 | 1684,4 | 3368,9 | 5053,3 |
| | Գույքահարկ ընդ | 1670,4 | 417,6 | 835,2 | 1252,8 |
| | ն/թ ա) շինություններ | | | | |
| | Ֆիզիկական անձեր | | 0 | 0 | 0 |
| | Իրավաբանական անձեր | 0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | բ) տրանսպորտային միջոց | | | | |
| | ն/թ ֆիզիկական անձեր | 1500,4 | 375,1 | 750,2 | 1125,3 |
| | Իրավաբանական անձեր | | 0 | 0 | 0 |
| | Գույքահարկի ապառք | 170,0 | 42,5 | 85,0 | 127,5 |
| 2 | Հողի հարկ | 3567.3 | 891.8 | 1783.65 | 2675.5 |
| | Հողի հարկի (96-99թթ) ապառք | 0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | Անցյալ տարիների ապառք | 1500.0 | 375,0 | 750,0 | 1125,0 |
| 3 | Պետական տուրք | | 0 | 0 | 0 |
| 4 | Տեղական տուրքեր և վճարներ | 70.0 | 17.5 | 35.0 | 52.5 |
| | ն/թ անցած տարիների ապառք | | 0 | 0 | 0 |
| II | Ոչ հարկային եկամուտներ | 1331.0 | 332.8 | 665.5 | 998,3 |
| | 1 հողի վարձավճար | 740.0 | 185.0 | 370.0 | 555.0 |
| | //-//-// ապառք | 100,0 | 25 | 50 | 75 |
| | 2 Խոտահարկի վարձավճար | 307.0 | 76.8 | 153.5 | 230.3 |
| | //-//-// ապառք | | | | |
| | Այլ ոչ հարկային | | | | |
| | 3 արոտների վարձավճար | 184.0 | 46.0 | 92.0 | 138.0 |
| | //-//-// ապառք | | 0 | 0 | 0 |
| III | Համահարթեցման դոտացիա | 22100,1 | 5526,0 | 11050,1 | 16575,1 |
| | Ընթացիկ ծախսերի սուբվենցիա | 0 | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ն/թ անցած տարիների ապառք | | 0.0 | 0.0 | 0.0 |
| | Պատվիրված լիազորություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| IV | Վարչական գանձումներ | 840,0 | 210,0 | 420,0 | 630,0 |
| | Աղբահանություն | 840,0 | 210,0 | 420,0 | 630,0 |
| | Ծնողական միջոցներ | 0 | 0 | 0 | 0 |
| | | | 0 | 0 | 0 |
| | | | 0 | 0 | 0 |
| Ընդամենը վարչական բյուջե | | 31078,8 | 7769,7 | 15539,4 | 23309,1 |
| | | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |

Ծախսային մասը հավասարակշռված է եկամուտային մասի հետ և կազմում է

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4111 | Աշխատավարձ | 17000.0 | 4250.0 | 8500.0 | 12750.0 |
| 4112 | Պարգևատրում | 1500,0 | 375,0 | 750,0 | 1125,0 |
| 4111 | Աշխատավարձի նախ. տար. պարտք | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| 4111 | Պատվիրված լիազորություն | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4111 | Պատվիրված լիազորություն առանց ապառք | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4131 | Աշխատավարձի վրաեկ | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4131 | Նույնը անցած տարիների պառտք | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4131 | Պատվիրված լիազորություն | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4216 | Գույքի վարձակալություն | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4212 | Էներգետիկ ծառայություններ | 600.0 | 150.0 | 300.0 | 450.0 |
| 4213 | Կոմունալ ծառայություններ | 840.0 | 210,0 | 420,0 | 630,0 |
| 4214 | Կապի ծառայություններ | 300.0 | 75.0 | 150.0 | 225.0 |
| 4221 | Ներքին գործուղման ծախսեր | 300.0 | 75.0 | 150.0 | 225.0 |
| 4726 | Հողակավարության ծախսեր | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4232 | Համակարգչային ծառայություններ | 200.0 | 50.0 | 100.0 | 150.0 |
| 4234 | Տեղեկատվական ծառայություն | 200.0 | 50.0 | 100.0 | 150.0 |
| 4235 | Աուդիտորական ծառայություն | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 2000.0 | 500.0 | 1000.0 | 1500.0 |
| 4241 | Մասնագիտական ծառայություններ | 300.0 | 75.0 | 150.0 | 225.0 |
| 4251 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում | 700.0 | 175.0 | 350.0 | 525.0 |
| 4252 | Մեքենա սարքավորումների ընթացիկ նորոգում | | 0.0 | 0.0 | 0.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4261 | Գրասենյակային նյութեր | 500.0 | 125.0 | 250.0 | 375.0 |
| 4264 | Տրանսպորտային նյութեր | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4267 | Կենցաղային նյութեր | 400.0 | 100.0 | 200.0 | 300.0 |
| 4269 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 500.0 | 125.0 | 250.0 | 375.0 |
| 4729 | Կրթության և սպորտային նպաստներ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4729 | Օգնություն քաղաքացիներին | 580.0 | 145,0 | 290.0 | 425.0 |
| 4729 | Ծննդյան նպաստներ | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4822 | Այլ հարկեր | 50.0 | 12.5 | 25.0 | 37.5 |
| 4823 | Պետական տուրք | 50.0 | 12.5 | 25.0 | 37.5 |
| 4891 | Պահեստային ֆոնդ | 5058.8 | 1264.7 | 1529.4 | 3794.1 |
| 4819 | Նվիրատվություն | .0 | 0 | .0 | 0 |
| 4729 | Ավագանու ծախսերի փոխհատուցում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Ընդամենը | | 31078,8 | 7769,7 | 15539,4 | 23309,1 |

Խաչաղբյուր համայնքի ավագնին քննարկելով ներկայացված 2018 թ-ի բյուջեի համամասնությունները համաձայն «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ 2002 թ-ի մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» 1997 թ-ի հունիսի 24-ի օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածի

Որոշեց՝

1. Հաստատել Խաչաղբյուր համայնքի 2018 թ-ի բյուջեն՝

ա/ Եկամտային մասով 31078,8 (երեսուն մեկ մil. յոթանասուն ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

բ/ Ծախսային մասով 31078,8 (երեսուն մեկ միլ. յոթանասուն ութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

Հանձնարարել համայնքի ղեկավար պարոն Ս. Գալստյանին հնարավորինս ապահովվել եկամուտների ապահովումը, իսկ ծախսերը կատարել համաձայն հատվածի բյուջեի:

Թույլատրել համայնքի ղեկավարին, անհրաժեշտության դեպքում, համաձայն ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ ենթակետի տարվա ընթացքում դասակարգման մեջ, կամ հոդվածներում կատարելու փոփոխություններ եռամսյակից եռամսյակ:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|
| Վ. Խաչատրյան | | |
| Տ. Գաբոյան | | |
| Ա. Գաբոյան | | |
| Գ. Խաչատրյան | | |

Պ.Զաքարյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 5

Լսեցին 5-Համայնքապետարանի գրասենյակային գույքի՝ էլ. սարքավորումների (համակարգիչ,տպիչ) ձեռք բերելու մասին:

Զեկուցող՝ Ս. Գալստյան:

Ներկայացվեց, որ համայնքապետարանի համակարգիչը, որում տեղադրված է գույքահարկի և հողի հարկի հաշվարկման բազան շարքից դուրս է եկել, հին սերնդին պատկանող համկարգչի հզորությունը չի բավարարում համապատասխան պահանջները կատարելու համար: Խնդիրներ են առաջացել նաև տպիչների հետ:

Համայնքի ղեկավարը կարևորելով համակարգչային ծառայության նշանակությունը առաջարկեց ավագանուն համաձայնություն տալ համայնքի բյուջեից 300000(երեք հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել համայնքապետարանին նոր համակարգիչ և տպիչ ձռք բերելու համար:

Հարցի կարևորությունը լսելուց հետո ավագանին

Որոշեց՝

Համաձայնություն տալ համայնքի բյուջեից 300000(երեք հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել համայնքապետարանին նոր համակարգիչ և տպիչ ձռք բերելու համար:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Ավագանու անդամները որոշումը հաստատեցին քվեարկությամբ:

| ԿՈՂՄ | ԴԵՄ | Ձեռնպահ: |
|---|---|---|
| Վ. Խաչատրյան | | |
| Տ. Գաբոյան | | |
| Ա. Գաբոյան | | |
| Գ. Խաչատրյան | | |
| Պ. Զաքարյան | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Գալստյան